



Empowered lives.
Resilient nations.

Նոյեմբերի 7, 2019

ՀՐԱՎԵՐ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (ՔՈԱՖ), Հայաստանում Եվրոպական միության պատվիրակությունը և Հայաստանում ՄԱԿ-ի Ջարգացման ծրագիրը (ՄԱՁԾ), համագործակցելով ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության դեսպանության ու Արմենիա Մարիոթ հյուրանոցի հետ, միավորվել են իրենց հուզող գաղափարի շուրջ՝ իրագործելու **«Գյուղական համայնքների զարգացում» թեմայով համաժողով, որը տեղի է ունենալու ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնում (Լոռու մարզ՝ Դեբետ համայնք) 2019թ. նոյեմբերի 9-10-ը:**

Համաժողովը մեկնարկում է նոյեմբերի 9-ին՝ ժամը 13:30-ին:

Նախաձեռնության նպատակն է համախմբել ոլորտում կարևոր ներդրում ունեցող տեղական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների՝ ստեղծելով երկխոսության ու փորձի փոխանակման հարթակ: Սա նաև հրաշալի հնարավորություն կընձեռի կիսվել ձեռք բերած հաջողություններով և հիմք ստեղծել ապագա համագործակցության համար:

Համաժողովի ընթացքում զեկույցներն ու քննարկումները անդրադառնալու են 5 թեմաների՝ կրթություն, առողջապահություն, սոցիալական հարցեր, ենթակառուցվածքներ ու տնտեսական զարգացում , միգրացիա:

Համաժողովին մասնակցում են գյուղական համայնքների զարգացման ոլորտում ծրագրեր իրականացնող տեղական ու միջազգային կազմակերպությունների, պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ, տեղական ու միջազգային փորձագետներ, անհատ ձեռներեցներ:

Համաժողովի շրջանակներում նաև տեղի կունենա ՔՈԱՖ-ի կողմից նախօրոք հայտարարված Գյուղի զարգացման ծրագրի մրցանակաբաշխությունը, որի ընթացքում շահառուների հաղթող



British Embassy
Yerevan

IN PARTNERSHIP WITH

3 խմբերին կտրամադրվեն համապատասխան դրամաշնորհներ իրենց ներկայացրած ծրագրերն իրագործելու համար:

Մամուլի հաղորդագրությանը կցված է նաև համաժողովի օրակարգը, նկարագիրն ու ձևաչափը:

Հավելյալ տեղեկությունների համար կարող եք կապ հաստատել՝

Դավիթ Մանուկյան-ՔՈԱՖ-ի Հաղորդակցության բաժնի ղեկավար

Հեռ.՝ +37493077466

Էլփոստ: david.manoukian@coaf.org

* * *

[«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը \(COAF\)](#) բարեգործական կազմակերպություն է, որի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղաբնակների կյանքի որակը համայնքային զարգացման երեխայակենտրոն ծրագրերի միջոցով: Հիմնադրամի համակողմանի ծրագրային մոդելի իրագործումն սկսվել է 2004թ., և այդ ժամանակից ի վեր իրականացվում են կրթական, առողջապահական, սոցիալական և տնտեսական ծրագրեր, ինչպես նաև հիմնանորոգվում են համայնքների համար կենսական նշանակություն ունեցող ենթակառուցվածքները: Այս ծրագրերի շահառուներն են Հայաստանի Արմավիրի, Արագածոտնի, Լոռու, Գեղարքունիքի, Շիրակի և Տավուշի մարզերի 51 համայնքների ավելի քան 75,000 բնակիչները:

2015թ. սկսած՝ ՔՈԱՖ-ը մշակել և իրագործում է նոր տեսլական՝ [ՍՄԱՐԹ նախաձեռնություն](#): ՍՄԱՐԹ-ը կրթության միջոցով առաջխաղացում է ապահովելու գյուղական աշխարհի համար, ինչի արդյունքում շահում են անհատները, հասարակությունը և միջավայրը: ՍՄԱՐԹ-ը կդառնա զարգացման օրինակելի մոդել և կկրկնօրինակվի Հայաստանի այլ մարզերում և համայնքներում:

ՔՈԱՖ ՍՄԱՐԹ առաջին կենտրոնը տեղակայված է Լոռու մարզի Դեբետ գյուղում. բացումը կայացել է 2018 թ. մայիսին՝ ծառայելու մարզի շուրջ 150 հազար բնակիչներին:

Եվրոպական միության անդամ երկրները որոշել են աստիճանաբար կապակցել իրենց նոու-հաուն, ռեսուրսներն ու ուղիները: 50 տարվա ընդարձակման ժամանակահատվածում նրանք միասին ստեղծել են կայունության, ժողովրդավարության ու կայուն զարգացման տարածք՝ պահպանելով մշակութային զանազանությունը, հանդուրժողականությունը և յուրաքանչյուրի անկախությունը: Եվրամիությունը հանձնառու է կիսել իր ձեռքբերումներն ու արժեքները իր սահմաններից այն կողմ գտնվող երկրների ու ժողովուրդների հետ:

ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը գործընկերային կապեր է հաստատում հասարակության բոլոր խավերի ներկայացուցիչների հետ՝ զորակցելով պետություններին դիմակայելու ճգնաժամերին: ՄԱԶԾ-ն խթանում է նաև աճը, որ կոչված է բարելավելու յուրաքանչյուր անձի կյանքի որակը: Մնայուն ներկայություն ունենալով մոտ 170 երկրներում և տարածքներում՝ մենք համաշխարհային փորձ և տեղական լուծումներ ենք մատուցում՝ նպաստելով կյանքի բարելավմանը և աջակցելով կայուն պետականության ձևավորմանը: ՄԱԶԾ-ն հաստատվել է Հայաստանում 1993թ. մարտին և աջակցում է կառավարությանն իրականացնելու ազգային զարգացման առաջնահերթությունները, ինչպես նաև հասնելու Կայուն զարգացման նպատակներին:



British Embassy
Yerevan

IN PARTNERSHIP WITH

Բրիտանական դեսպանատունն իր գործունեությամբ նպաստում է Միացյալ Թագավորության և Հայաստանի միջև երկկողմ հարաբերությունների զարգացմանը՝ համագործակցելով Հայաստանի կառավարության և այլ գործընկերների հետ: Հայաստանում ՄԹ աջակցության ներկայիս ծրագրերն ուղղված են մարդու իրավունքների, լավ կառավարման և ժողովրդավարության միջազգային սկզբունքների ներդրմանը, պաշտպանական և անվտանգության համագործակցությանն աջակցելուն, կայունության հաստատմանը, կայուն տնտեսական աճի խթանմանը և երկու երկրների ժողովուրդների միջև կապերի հետագա ամրապնդմանը:

